

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵԶԻ ՈՒՇԱԳՐԱՎ ԿՈՉ-ԴԻՄՈՒՄԸ

Գարեգին Նժդեհի ռազմագիտական երկերը, զինվորական հրամանները և այլ գրությունները, նաև գրական-հրապարակախոսական ժառանգությունը մեր ժողովրդի ամենալայն զանգվածների սեփականությունը դարձնելու գործում մեծ աշխատանք է կատարվել: Դրա վկայությունն այն ստվար հատորները, հրապարակումներն են, որոնք այսօր դրված են ընթերցողի սեղանին: Մակայն դեռևս կան նժդեհյան մասունքներ, որոնք անձանոթ են ոչ միայն ընթերցող լայն շրջաններին: Այսպես, 1920 թ. աշնանը 11-րդ կարմիր բանակի հրամանատարությունը ստեղծում է հարվածային հատուկ զորամիավորում՝ այն ուղղելով Ջանգեզուրի, Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի շրջաններ՝ նպատակ ունենալով հայկական այդ մարզերը բռնակցել նորերս խորհրդայնացած Ադրբեջանին: Այդ օրերին, ահա, Նժդեհը դիմում է հայ բոլշևիկ զինվորներին՝ կոչ անելով չմոլորվել հակառակորդի խոստումներից, վերադառնալ գյուղերը և զենքը ձեռքներին պաշտպան կանգնել իրենց կանանց ու երեխաներին:

Ստորև հրապարակվող այդ փաստաթուղթը, անկախ դիմումի ոճից, հայ զինվորներին սթափության կոչող մի վավերագիր է և այդ իմաստով այսօր էլ պահպանում է իր հայրենասիրական խորիմաստ նշանակությունը (փաստաթուղթը տե՛ս՝ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 195, ց. 3, գ. 981, թ. 6: Բնագիր):

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր


ՆժԴԵԶԻ ԴԻՄՈՒՄԸ ՀԱՆՐ-ՔՅՈՒՐԴԻՔԵՆԴ ԵԿԱԾ
ՀԱՅ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻՆ

27 սեպտեմբերի 1920 թ.
Տաշտուն

Քյուրդիքենդ եկած բոլշևիկ կոչվածներին*

Դուք լսած կլինեք իմ անունը և գիտեք, որ ես դավաճաններին կոտորում եմ շների պես: Լսել եք, չէ՞, Ալանգյազի և Շիվանիձորում տարած մեր հաղթության մասին: 300-ից ավելի սատակած-սպանվածների դիակները այժմ շները և գայլերն են քրքրում: Ես թուրքերին և ռուսներին այն հաճույքով չեմ կոտորում, ինչպես կոտորել եմ տալիս կովի ժամանակ և կովից դուրս հայ ցեղի տականքը, մուռտառությունը կազմող հայ կաշառված լրտեսներին և դավաճաններին:

* Ք ր դ ի ք ե ն դ . ա յ ժ մ՝ Լ ե ո ն ա ձ ո թ :



Հատված Գ. Նժդեհի կոչ-դիմումից:

Խեղճեր, ձեզ խաբել են, ուղարկել Օխիձոր, իսկ իրենք, ռուսները, Միսիանի վրայով գիշերներն են փախչում: Լսե՛լ էք գեներալ Վրանգելի դեսանտի և հաղթանակների մասին: Գիտե՛ք, որ պոլյակները Մոսկվա են մտնում: Դադստանը ապստամբել է և շների պես է կոտորում և զինաթափ անում բոլշևիկներին: Ադրբեջանում երրորդ օրն է, ինչ զինաթափում են ռուսներին: Շատ տեղերում կոտորում են: Հայկական զորքերը մտնում են Նախիջևան և Միսիան: Ձեր կեղծ ռուս և թուրք ընկերները մեր երկու ֆրոնտում էլ փախել են, ջարդվելուց հետո: Զգույշ եղեք, հերիք է, որքան Ադրբեջանի կույր գործիքը դարձաք:

Ձեզ մի օր ժամանակ եմ տալիս, եթե չթողեցիք-հեռացաք այդ ձորը՝ Ալանգյազի և Շիվանիձորի սեր ձեր գլխին կբերեմ: Խեղճ էք, հայ տղաներ, չեք վախենում, որ վաղը, երբ դուք բացակայում եք Միսիանից, մինչև ատամները զինված Հաջի Սամլուն և Մենքենդը գիշերով կիջնեն ու սրի կքաշեն ձեր կին ու երեխաներին: Վերադարձեք, խեղճեր, վերադարձեք ձեր գյուղերը, վերցրեք հրացաններդ և նստեք ձեր դիրքերում, որ թրքությունը ձեր ծնողների արյունով Ձեր երկիրը չներկի:

Հրամանատար՝ Նժդեհ